

Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐ

Առավոտյան, երբ քաղաքը դեռ նոր էր արթնացել
քնից`

ես դուրս եկա տնից անհոգ ու անշտապ:
Ես կանուխ շուկայի ճամփան բռնեցի, որ գյուղից
բերած թարմ

պանիր ու մածուկից ինձ էլ հասներ կիրակի
այդ օրը:

Մեր քաղաքում եկեղեցի չկա, որ այդժամ զնգզնգային զանգերը,
բայց ես, կարծես թե` ականջներիս
մեջ զանգի

դողանջներ լսեցի:

Դեռ նոր էին ալարկոտ աչքերս պտտվում շուրջս,
երբ հանկարծ

մի զույգ փոքրիկ քույր ու եղբայր հայտնվեցին դեմս.

Դալուկ էին նրանց դեմքերը` իրիկնաժամի հոգնած
արեւի նման դեղին:

Նրանց ձեռքերը սեւացած էին, մազերն անփայլ ու
աջուճախից խուզած,

իսկ աչքերը խոշոր էին` տակերը փոս ընկած:
-Չացի փող չես տա՞, մորթուր,- առանց այլայլվելու
ասաց տղան...

Աղջիկը հեզ էր ու տառապած, աչքերը որոնում էին
այն, ինչ շուտով պիտի

ստանան,

Իսկ շուրթերը մրմնջում էին խորհրդավոր` ոչ մամա

ունենք, ոչ պապա...

Ես նրանց տվեցի դրամապանակս իր ողջ պարունակությամբ եւ լուռ դարձա տուն:
Ավերված հոգով պառկեցի խաղաղ
քնած երեխաներիս կողքին:

-Ո՞վ է մեղավոր:

ՂԵՂԻՆ ԿԱՏՈՒ

Երբ դեռ փոքր էինք՝ ես ու եղբայրս,
ամբողջ ժամանակ մտածում էինք ինչպե՞ս պարածել
մեր փոքրիկ ու դեղին

կատվին:

Եղբայրս շատ էր չարաճճի ու անհոգի, քանզի նա
վերցրեց

սեղանի վրա դրված օղին ու լցրեց կոկորդը խեղճ

կատվի:

Օրորվեց կատուն քիչ հետո եւ սկսեց պտտվել ուժգին՝

իբր թե

վազում է իր պոչի հետեւից:

Հաջորդ օրերին մենք դառնազին լաց եղանք,

որովհետեւ գնաց կատուն ու այլեւս չերեւաց աչքերին:

Երեւի կյանքում առաջին անգամ մեր դեղին կատուն
զարմացավ, թե ինչու՞ է իր պոչն այ դքան հեռու
իրենից...

ԱՆՆԵԼՔ ԱՂՋԻԿ

Այսօր սուրճ խմեցի եւ

գավաթս շուռ տվեցի,

Փորձելով ժամ առաջ իմանալ

գլխիս եկող փորձանքների մասին:

Աչքերս պրպտեցին աջից ձախ,

Ձախից աջ,

Վերից վար, վարից վեր եւ

Մի անգլուխ աղջիկ նկատեցին:

-Ի՞նչ է հուշում պատկերն այդ՝

Հարցրի բոլորին:

Թոթվեցին նրանք ուսերը՝

Մի՞թե կա իսկություն մարմնում այդ,

որ գլուխ չունի:

Անշուշտ, ես եմ աղջիկն այդ անմիտ,

քանզի, ես էի, որ

մի ժամանակ

գլուխս կորցրեցի...

ԱՇՆԱՆ ՏԵՍԻՆՆԵՐ

Տերերը թարտում է քանու ավի մեջ,
Ինչպես ցավագար ծիծեռնակը
Կրծքիս տակ:
Քամին սանձահար է եղել
Խենթացած նժույզի նման,
Տերեւները հեծնում են նրան
Եվ վայր ընկնում:

Ճաքած պատից կավե արցունքներ են
ընկնում:

Պատը ծերացել է աշնան նման:
Պատը...
Յոնգուր-հոնգուր լախս է աշնան գրկում:

Ամպերը ծվեն-ծվեն են լինում:
Նրանց թվում է,
Թե աշունը իրենց մեռած մայրն է,
հարություն է առել:
Ես ասում եմ՝
մառախուղը խտացած կարոտ է,
Մառախուղը թախճոտ հայացք է՝
Սրտակտոր հեկեկում է:
Դու ասում ես՝ չէ՛,
Երգ է,
Երգ է,
Երգ է...

ԲԱՅՑ ՆԱ ՇՓՈՐԿԵՑ

Երբ նա ստեց՝ ես ամոթից կարմրեցի:
Ես մտածեցի, որ նա չի հասկանա իմ զայրույթը
Եւ կշարունակի հորինել, բայց
նա շփոթվեց, նայեց ձեռքի լուռ հեռախոսին եւ արագ

հեռացավ՝ առանց հրաժեշտի:

Ես սպասեցի, մինչեւ շիկնանքս անցնի, որ շարունակեմ
անդառնալի ճամփաս:

ԵԹԵ

Եթե դու ամեն օր գաս ու իբր թե՛ դառնացած, պատմես, թե ինչպես են
մարդիկ դրսում իրար կոկորդ կրծում կամ հրմշտելով
անցնում,

Ապա ես, կունկդրեմ քեզ զարմացած ու կտարուբերեմ
գլուխս անտեղյակ,
որովհետեւ, ով գիտե, ինչո՞ւ ես պատմում ինձ
պատմություններն այդ հասարակ:

Եթե դու, ամեն օր գաս ու պատմես, թե ինչպես են
թոշակի հերթերում ծերերը
թագավորի հերն անիծում, կամ պատմես, որ այս
տարվա

սաստիկ անձրեւների պատճառով փտեց հողում
ամեն բան,

Ապա ես, կնայեմ քեզ սրտացավ ու հոգեմաշ, ու
կասեմ՝

գիտեմ, գիտեմ այս երկրի փուչ ամեն բան:

Եթե, ամեն օր գաս ու պատմես, որ դրսում մեքենաներն իրար
խանգարում են

առհասարակ ու շարունակես պատմություններ
կենցաղագրական,

ապա ես, կհանդգնեմ հարց տալ մի թեթեւ՝ ա՞յդ է քեզ
հուզում միթե...

Եթե դու ամեն օր գաս՝ գնաս, գնաս ու նորից գաս՝
ինչ-որ բաներ

պատմես, գնաս ու... էլ չգաս,

Ապա ես, ո՞ւմ նայեմ շվարած ու լսեմ մարդկանց,
հերթերի,

եղանակի ու մեքենաների մասին, որ պատմում էիր,
իբր թե
դառնացած...

Տեսուհի ԵՐԳ

Ես ընկած եմ մայթին:

Գլուխս ջարդված է:

Ծերերն անիծում են իրենց բախտը,

որ դեռ աչքերը տեսնում են:

Ես նստած էի պատուհանիս մոտ,

երբ տունս ավետափ լցվեց քո կարոտով

եւ ինձ հրեց դուրս...

Ներիր ինձ, սեր իմ:

Այլեւս չկամ: